Հայկական գինու լեգենդը

Ինչը՞ կհաղթեր կյանքում հերոսին, թե չլինեին կինն ու գինին:

Հայկական գինու լեգենդը

Բակունց Մարի

Ջհանգիրյան Մարի

Ղուկասյան Նարե

Վարդանյան Արեն

Մեժլումյան Նարե
Յուզբաշյան Տրդատ

Նախագծի ղեկավարներ՝

Հերմինե Ալավերդյան
Ռուզաննա Խաչատրյան
Մերի Դանիելյան

Գինին համարվում է աշխարհի ամենահայտնի խմիչքներից մեկը։ Մարդիկ գինեգործությամբ դեռևս վաղ ժամանակներից են զբաղվում։ Գինու մասին խոսում են Աստվածաշնչում, հունական և հռոմեական առասպելաբանության մեջ, որտեղ նաև ներկայացնում են գինու Աստվածներին (օրինակ՝ Դիոնիս)։ Պետք է նշել, որ գրեթե ամեն ազգ ունի գինու մասին իր լեգենդները։ Այս ալկոհոլային խմիչքն ուսումնասիրող գիտություն կա՝ գինեգործություն։

Հայոց բնաշխարհը անզուգական խաղող ու գինի ստանալու ի վերուստ տրված շնորհ ունի։ Համաձայն Աստվածաշնչյան հայտնի պատմության՝ Հայաստանը հանդիսանում է խաղողագործության և գինեգործության բնօրրանը։ Աշխարհում կան շատ հրաշալի և գեղեցիկ լեգենդներ գինու գյուտի մասին, բայց ամենահինը Աստվածաշնչյան պատմությունն է։ Ըստ լեգենդի՝ մարդկությունը բացահայտեց գինու համը և զգաց դրա ազդեցությունը այն ժամանակ, երբ Նոյ Նահապետը ջրհեղեղից հետո Արարատ լեռան ստորոտին տնկեց խաղողի առաջին որթը։ Նոյին գինու պատրաստման գաղտնիքը բացահայտել էր այծը, ով կերել էր խաղողի վայրի պտուղներ և հարբելու արդյունքում սկսել էր հրմշտել մյուս կենդանիներին։ Որից հետո էլ Նոյը Արարատ լեռան լանջերին խաղող տնկեց, և վերջինիս պտուղներից էլ գինի ստացավ։ Գինին այնքան համեղ էր, որ չդիմացավ գայթակղությանը՝ «խմեց և արբեց»։

Հետաքրքիր փաստեր գինու մասին

Հին ժամանակներում գինին սկզբում տանտերն էր ըմպում, որպեսզի հյուրերը համոզվեն, որ խմիչքը թունավոր չէ։ Եվ այստեղից էլ առաջացել է «Խմել առողջության համար» արտահայտությունը:

Ոչ բոլոր գինիների համն է ժամանակի ընթացքում լավանում։ Գինիների մեծամասնությունը նախատեսված է միանգամից օգտագործելու համար, և միայն սակավաթիվ գինիների համն է տասնամյակների ընթացքում լավանում:

Գինու համտեսման ընթացքում հարկավոր է խմիչքը մի փոքր բերանի մեջ պահել: Որակով գինու համն ավելի երկար կմնա, իսկ ցածր որակով գինու դեպքում՝ չի մնա:

Թանկ, ավելի ծանր սննդի հետ թունդ գինի են օգտագործում, թեթև սննդի հետ թեթև գինի են օգտագործում: Բացի այդ, կարմիր գինին կարմիր մսի հետ են մատուցում, սպիտակ գինին՝ սպիտակ մսի հետ, իսկ քաղցր գինին՝ աղանդերի հետ:

Համաձայն Եվրամիության՝ փրփրուն գինին, որն արտադրվում է Ֆրանսիայի Շամպայն նահանգի սահմաններից դուրս, չի կարող «շամպայն» կոչվել:



Հին աշխարհում գինին տարբեր ազգերի մարդկանց միջև հարաբերություններ էր հաստատում և փոխանակման ապրանք էր հանդիսանում: Օրինակ՝ հույները խմիչքը փոխանակում էին թանկարժեք մետաղների հետ, իսկ հռոմեացիները՝ ստրուկների հետ:

Որպես կանոն, ժամանակի ընթացքում կարմիր գինին կորցնում է իր գույնը, այն ստանում է կաս-կարմիր երանգ։ Սպիտակ գինին դառնում է ոսկեգույն երանգով շագանակագույն։

Օրհնանքներ, ասացվածքներ խաղողի, գինու մասին

Աշնան գինին, գարնան՝ ջուրը։

Երբեք մեզնից մի վերցրու մեր ցորենը և գինին իրենց սեզոններին։

Կարասն Ձեր լցվի գինով, ավետիս,

Եվ տունը ձեր՝ շեն բարիքով, ավետիս։

Ձեր կարասնին լեցվին գինով, ավետիս։

Հառաջ զխաղողն տնկեցին,

Եվ բարձրաձայն զայն գովեցին։

Խաղո՛ղ, զքեզ գովել պիտի,

Անմահության պտուղ ես դու։

Զքեզ քաղեն, տանին հնձան, Ճմլեն զքեզ ու տան յիրար, Տանին լնուն զքեզ կարաս:

Ողկեյզ հաւողն հասեալ է,

Թուխ ու սպիտակ կախեալ է,

Կարասն՝ գինով լցեալ է:

Ազգ մի թուխ, ազգ մի սպիտակ,

Ազգ մի կարմիր, որ լուս կուտար,

Ազգ մի դեղին խունկի նման,

Անուշահոտ մուշկ ու ամպար:

Հնձան եմ փորեր այգոյս,

Կարաս եմ լցեր գինոյս:

Կախանն եօր է, վաղն կաղանդ, ալելա:

Ինոր մառանը լիքն է գինւով, ալելուա:

Կարասն Ձեր լցվի գինով, ավետիս:

Կթխան ի մեջ գինով ի լի, ավետիս:

Գինու մասին ասացվածքներ , հայտնի մարդկանց կարծիքներ

🇦🇲Աշնան գինին, գարնան՝ ջուրը:

🇦🇲Ինչը՞ կհաղթեր կյանքում հերոսին, թե չլինեին կինն ու գինին:

🇮🇹Ընկերությունն ու գինին ոչ մի լումա չարժեն, քանի դեռ չեն հնացել:

🇮🇹Ջուրը խմեք ինչպես ցուլը, իսկ գինին՝ թագավորի նման:

🇮🇹Գինին, ծխախոտն ու կանայք ձեզ լավ բան չեն բերի: 😀

🇪🇸Լավ սնունդ, վատ սնունդ - բայց գինի միշտ խմեք 😉:

🇪🇸Ջրի մեջ տեսնում ես դեմքիդ արտացոլանքը, գինու մեջ՝ հարազատներիդ սրտի արտացոլանքը

🇬🇷Այն ամիսներին, որոնց անվան մեջ չկա «ր» (ρ) տառy, ապա գինուն ջուր ավելացրեք: 🙂

🇫🇷Հացը կերեք ըստ ցանկության, իսկ գինի խմեք չափի մեջ:

🇫🇷Գինին և պանիրը կարծես համբույր լինեն

🇨🇳 Կա փող, կա գինի - ընկերները կգտնվեն:

Մի քանի պատմական ասույթներ լատիներենով

🍷In vino veritas (ճշմարտությունը գինու մեջ է)

🍷Amicitia inter pocula contracta plerumque vitrea est (ընկերությունը ապակյա է մի գավաթից հետո)

🍷Non est culpa vini, sed culpa bibentis (Մեղավորը գինին չէ, խմողն է մեղավոր)

🍷Prima cratera ad sitim pertinet, secunda – ad hilaritatem, tertia – ad voluptatem, quarta — ad insaniam (առաջին գավաթը հագեցնում է ծարավը, երկրորդը՝ զվարճանքը, երրորդը՝ հաճույքը, չորրորդը՝ խելագարությունը)

🍷Vinum apostatare facit etiam sapientes (Գինին նույնիսկ իմաստուններին է դրդում մեղքի)

Հայտնի մարդկանց հայտնի կարծիքները

💪Գյոթե - Կյանքը շատ կարճ է, որպեսզի վատ գինի խմես:

💪Օմար Խայամի - Գինին արգելված է, բայց կա 4 "Բայց", կախված Ո՞վ է, Ո՞ւմ հետ, Ե՞րբ և Ինչքա՞ն: Պահեք այս 4 պայմանները և խմեք լավ գինի:

💪Եվրիպիդես - Որտեղ չկա գինի, չկա և սեր:

💪Բենիամին ֆրանկլին - Գինին ապացույցն է նրա, որ Աստված սիրում է մեզ և նրան դուր է գալիս, որ մեզ տեսնում է երջանիկ:

💪Լուի Պաստեր - Գինու շշի մեջ ավելի շատ փիլիսոփայություն կա, քան աշխարհի բոլոր գրքերում:

💪Նապոլեոն Բոնապարտ - երբ դու հաղթում ես արժանանում ես շամպայնի, իսկ երբ պարտվում ես, կարիք ունես գինու:

💪Մարտին Լյութեր - Գարեջուրը ստեղծված է մարդու կողմից, իսկ գինին՝ Աստծո:

💪Ալեքսանդր Ֆլեմինգ - Պենիցիլինը բուժում է, գինին՝ երջանկացնում: